



ՀՀ ՔԱՂԱՔԱՅՈՒ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հրատարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան
աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց
իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում*

ԵՐԵՎԱՆ 2024





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ	3
2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	5
3. ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ.....	9
4. ՓԱԽՍՏԱԿԱՆԸ.....	12
5. ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....	16
6. ՉՎԵՐԱԴԱՐՁՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ.....	22
ՀԱՎԵԼՎԱԾ 1	24
ՀԱՎԵԼՎԱԾ 2	28

Հրատարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրավական ացվող «Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

1. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ



Քաղաքացիությունը պետության և անձի միջև կայուն իրավական կապն է, որի ուժով վերջիններս փոխադարձաբար ձեռք են բերում իրավունքներ և պարտականություններ: Ձեռք բերելով ՀՀ քաղաքացիություն՝ **ԼՂՀ բռնի տեղահանված անձն ունենում է միայն ՀՀ քաղաքացուն տրված իրավունքներ*** և պարտավորվում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որը համահունչ կլինի ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, իսկ ՀՀ-ն սահմանադրա-իրավական պարտավորություն է կրում իր հովանավորության և պաշտպանության ներքո պահել իր քաղաքացիներին: ՀՀ քաղաքացիները ՀՀ սահմաններից դուրս ևս ՀՀ պաշտպանության ներքո են: Օրինակ՝ այլ պետության տարածքում գտնվելու դեպքում արտակարգ իրավիճակի պարագայում ՀՀ քաղաքացիները կարող են դիմել տվյալ պետության տարածքում գործող ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական մարմիններին՝ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները և դրանց պաշտո-նատար անձինք պարտավոր են պաշտպանել այլ պետություն-ներում գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան («ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս):

*Ստավել մանրամասն տե՛ս հաջորդ կետում:

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրավական ացվող «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները**:

**ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու ընթացակարգի մասին առավել մանրամասն տե՛ս «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում ներկայացվող՝ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՈՒՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԶԱՅԱՏՏԱՆԻ ԶԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՑԱԼ» իրապարակման մեջ:

ՀՀ քաղաքացիությունը երաշխավորում է անձի իրավական պաշտպանությունը ՀՀ-ում և դրա տարածից դուրս:

2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՀՀ քաղաքացու իրավունքները

ՀՀ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու որոշակի խումբ հիմնական իրավունքների և ազատությունների շրջանակը նախանշելիս հիմք է ընդունել **քաղաքացիության փաստը**: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությամբ ամրագրված մի շարք իրավունքներ, որոնք բնորոշ են **միայն ՀՀ քաղաքացիներին**, հետևաբար՝ ԼՂՀ բռնի տեղահանված անձինք, ձեռքբերելով ՀՀ քաղաքացիություն, կունենան հետևյալ հավելյալ իրավունքները.

- **կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունք** (ՀՀ Սահմ. 46-րդ հոդված), այսինքն՝ ստեղծելով կուսակցություն կամ անդամագրվելով դրան՝ ԼՂՀ բռնի տեղահանված անձինք հնարավորություն կունենան մասնակցել ՀՀ քաղաքական կյանքին:
- **ընտրական իրավունք** (ՀՀ Սահմ. 48-րդ հոդված, ընտրելու և ընտրվելու իրավունք, Ազգային ժողովի ընտրության մասով): Այս իրավունքը ենթադրում է, որ Ազգային ժողովի ընտրության օրը ԼՂՀ բռնի տեղահանված 18 տարին լրացած անձինք կկարողանան մասնակցել ընտրություններին: Ավելին, ՀՀ քաղաքացի դառնալով՝ հետագայում նշված անձինք կարող են նաև ընտրվել ԱԾ պատգամավոր՝ բավարարելով համապատասխան սահմանադրական պահանջները, այն է՝ քսանհինգ տարին լրացած լինելը, վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալը, վերջին չորս տարում ՀՀ-ում մշտապես բնակվելը, ընտրական իրավունք ունենալը և հայերենին տիրապետելը:



- **հանրաքվեին մասնակցելու իրավունք** (ՀՀ Սահմ. 48-րդ հոդված): Այս սահմանադրական իրավունքը ենթադրում է, որ ԼՂՀ բռնի տեղահանված հանրաքվեի օրը 18 տարին լրացած անձը հնարավորություն կունենա մասնակցել հանրաքվեի դրվող այնպիսի կարևորագույն հարցերի քվեարկությանը, որպիսիք են՝
 - Սահմանադրության փոփոխությունների նախագիծը.
 - վերալետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ինչպես նաև ՀՀ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը.
 - հանրաքվեի դրված օրենքների և/կամ դրանցում կատարվող փոփոխությունների մասին օրենքի/ների նախագիծը և այլն:
- **հանրային ծառայության իրավունք** (ՀՀ Սահմ. 49-րդ հոդված): Այս իրավունքը ենթադրում է, որ ԼՂՀ բռնի տեղահանված անձինք հնարավորություն կունենան անցնել պետական և համայնքային ծառայության կամ զբաղեցնել հանրային պաշտոններ: Օրինակ՝ ծառայել ՀՀ ԶՈՒ, ՀՀ ՆԳՆ կամ զբաղեցնել քննիչի, դատախազի, դատավորի պաշտոն, դառնալ քաղաքացիական ծառայողներ՝ համալրելով ՀՀ դատական համակարգում, նախարարություններում մասնագիտական աշխատանքային գործունեություն իրականացնող ՀՀ քաղաքացիների շարքերը,
- **ՀՀ մուտք գործելու իրավունք** (ՀՀ Սահմ. 40-րդ հոդվածի 3-րդ մաս, սույն հոդվածը վերաբերելի է նաև ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող անձանց): ՀՀ անարգել մուտք գործելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և այլ անձինք, որոնք օրինական հիմունքներով ՀՀ-ում բնակվելու իրավունք ունեն: Այս իրավունքը երաշխավորում է անձի՝ առանց վիզային ռեժիմի **անխոչընդոտ** մուտք գործել ՀՀ տարածք:

ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերելու դեպքում, բացի հիշատակված սահմանադրական իրավունքներից, ԼՂՀ բռնի տեղահանված անձինք.

- կունենան ՀՀ քաղաքացու անձնագիր, որն անձին հնարավորության կտա ճամփորդել, ՀՀ-ում օրինական բնակվել և արտերկրում օգտվել ՀՀ դիվանագիտական պաշտպանությունից (մինչև 16 տարին լրանալը ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ կարող է չպահանջվել, եթե ներկայացվել են ծննդյան վկայականը և ծնողների՝ ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերը):
- կունենան սեփականության իրավունքով հող ձեռք բերելու հնարավորություն: Սահմանադրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողի օգտագործողներ: Բացառություն են կազմում միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք (Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մաս, Հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս): Նշվածը չի վերաբերում համաձայն՝ տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման, հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար հողամասերին: (Հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3.1-ին մաս):

ՀՀ քաղաքացիությունն անձին ընձեռում է մի շարք իրավունքներ, որոնք վերապահված են միայն ՀՀ քաղաքացիներին:

2.2 ԳՅ քաղաքացու պարտականությունները

Ձեռք բերելով ՀՀ քաղաքացիություն՝ ԼՂՀ բռնի տեղահանված անձինք պարտավոր կլինեն օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, այդ թվում՝ ծառայել ՀՀ զինված ուժերում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացի դառնալու դեպքում ԼՂՀ բռնի տեղահանված անձինք կստանան նաև Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված այլ պարտականություններ:

Ձեռք բերելով ԳՅ քաղաքացիություն՝
զինապարտության տարիքի հասած ԼՂՀ բռնի
տեղահանված քաղաքացիները պարտավոր
կլինեն ծառայել ԳՅ զինված ուժերում:



3. ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ



Ապաքաղաքացիությունը ենթադրում է, որ անձը չունի որևէ երկրի քաղաքացիություն, հետևաբար՝ քաղաքացիություն չունեցող անձը զրկված է ՀՀ քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և պետության հատուկ պաշտպանությունից: Հաշվի առնելով քաղաքացիության իրավունքի հիմնարար բնույթը, դրա դերն ու նշանակությունը յուրաքանչյուրի համար՝ անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր պետություն հնարավորինս բացառի ապաքաղաքացիության դեպքերը:

ՀՀ Սահմանադրությունն արգելում է պետությանը որևէ անձին զրկել քաղաքացիությունից: Նշված իրավակարգավորման նպատակը բխում է միջազգային կոնվենցիաներից և ուղղված է քաղաքացիություն չունեցող անձանց կրճատմանը: Ասվածը, ամենևին, չի ենթադրում, որ ՀՀ քաղաքացիությունը չի կարող դադարեցվել, օրինակ՝ այն դեպքում, երբ անձը փոխել է ՀՀ քաղաքացիությունը կամ, երբ ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել կեղծ կամ սխալ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա, եթե անձի կողմից կեղծ կամ սխալ փաստաթղթեր կամ կեղծ տվյալներ ներկայացնելը հիմնավորվել է օրենքով սահմանված կարգով, և արարքը կատարելու պահից չի անցել 5 տարի («Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված):

1961թ. Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան հիմնարար միջազգային փաստաթուղթն է, որն ուղղված է ապաքաղաքացիության կանխարգելմանը և նվազեցմանը: Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ ցանկացած պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է իր տարածքում

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրավական ացվող «Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ: Այդպիսի քաղաքացիությունը շնորհվում է Կոնվենցիայով նախատեսված դեպքերում:

Խնդրո առարկա հարցի քննարկման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն են ստանում **երեխաների ապաքաղաքացիությանը** վերաբերող հարցերը: Այսպես՝ 1989թ. նոյեմբերի 20-ի Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք: Իսկ նույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով՝ առանց անօրինական միջամտության, հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր ինքնությունը՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը:

1961թ. Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան նույնպես առանձնահատուկ կարգավորում է նախատեսում երեխաների վերաբերյալ՝ նպատակ ունենալով հնարավորինս կրճատել երեխաների ապաքաղաքացիությունը: Կոնվենցիայի 1-ին հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *«(․․․) որևէ Պայմանավորվող պետության տարածքում ամուսնությունից ծնված երեխան, որի մայրն ունի այդ պետության քաղաքացիությունը, ծնվելիս ձեռք է բերում այդ քաղաքացիությունը, այլապես նա կդառնա քաղաքացիություն չունեցող անձ»:*

Վերոնշյալը թույլ է տալիս եզրահանգել, որ միջազգային-իրավական փաստաթղթերը ոչ միայն կարևորել են ապաքաղաքացիության դեմ պայքարը, այլև առանձնահատուկ ուշադրություն են դարձրել երեխաների շրջանում ապաքաղաքացիության դեպքերի բացառմանը:

Երեխաների շրջանում ապաքաղաքացիության դեպքերի քաղաքական էն ուղղած նաև Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը: Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Սահմանադրական այս կարգավորումը, հիմնված լինելով քաղաքացիության ձեռքբերման արյան սկզբունքի վրա, նպատակ է հետապնդում երաշխավորելու երեխայի քաղաքացիությունը՝ Սահմանադրության ուժով այդ հանգամանքը կապակցելով ծնողների քաղաքացիության հետ, իսկ Սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք*:

* Առավել առավել մանրամասն տե՛ս «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում ներկայացվող՝ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՐՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՐՄԻՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՆՔԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՆՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ» հրապարակման մեջ:

4. ՓԱԽՍՏԱԿԱՆԸ

Փախստական է համարվում՝

- այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից,

կամ

- նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ.
- այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը,
- քաղաքացիություն չունեցող անձը՝

իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:



ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ են վերցվել.

1) Լեոնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրի հաշվառումներով անցնող անձինք,

2) ՀՀ տարածքում կամ ՀՀ-ից դուրս գտնվող այն անձինք, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է Լեոնային Ղարաբաղում.

3) այն անձինք, որոնք չեն ունեցել հաշվառում Լեոնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրում, սակայն բնակվել են Լեոնային Ղարաբաղում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեոնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից:

Ընդ որում՝ հիշատակված որոշումը չի տարածվում նշված, բայց այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ, օրինակ՝ ՌԴ քաղաքացու, ով բավարարում է հիշատակված պահանջները: Խնդրո առարկա որոշման ուժով ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձինք ճանաչվում են փախստական, հետևաբար՝ օգտվում են փախստականներին տրված բոլոր իրավունքներից:

ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ սահմանվել է, որ ժամանակավոր պաշտպանությունը տրվում է մեկ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ



ՀՀ-ում ապաստան ստացած ԼՂ բռնի տեղահանված փախստականի կարգավիճակ ունեցող անձի

- ամուսինը,
- մինչև 18 տարեկան զավակը
- և ինամքի տակ գտնվող այլ անձը

նույնպես համարվում են փախստական և ՀՀ-ում ապաստան ստացած, եթե նրանք ՀՀ-ում բնակվում են այդ փախստականի հետ համատեղ և չունեն փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ երկրի քաղաքացիություն:

ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի այլ բարեկամները կամ նրա ամուսնու բարեկամները նույնպես կարող են համարվել փախստական և ՀՀ-ում ապաստան ստացած, եթե նրանք ՀՀ-ում բնակվում են նրա հետ համատեղ, այդ փախստականի ինամքի տակ են և չունեն այդ փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն:

Փախստական ճանաչված և ՀՀ-ում ապաստան ստացած երեխայի ծնողները, մինչև 18 տարեկան, ինչպես նաև 18-ից բարձր տարիքի անգործունակ հարազատ քույրերն ու եղբայրները նույնպես համարվում են փախստական, և նրանց Հայաստանի Հանրապետությունում

տրամադրվում է ապաստան, եթե նրանք Հայաստանի Հանրապետությունում բնակվում են փախստականի կարգավիճակ ստացած երեխայի հետ համատեղ և չունեն այդ երեխայի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն:



2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից ԼՂ դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված անձինք ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանության տակ են վերցվել:

➤ **Անվճար իրավաբանական օգնության իրավունք:** Փաստացի փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձանց տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն՝ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետի: Համաձայն հիշյալ դրույթի՝ հանրային պաշտպանության շրջանակներում փախստականների տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն:

Հանրային պաշտպանի գրասենյակ

Հասցե: Զաքյան փող., 7-2 շենք, 2-րդ հարկ ՀՀ, 0010, Երևան

Էլ. փոստի հասցե: pashtpan@advocates.am

Հեռ: [+374-10-60 07 14](tel:+37410600714) [ընդունելություն \(10:00-17:00\)](http://www.pashtpan.am)

Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել նշված անձանց՝

- ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով),
- նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ,
- եթե դիմողի պահանջներն ակնհայտ անհիմն են,
- եթե անձը նույն հարցով, որի վերաբերյալ դիմել է հանրային պաշտպանի գրասենյակ, իրավաբանական օգնություն է ստանում այլ փաստաբանից:

- **Սեփականության իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք շարժական գույքի ձեռքբերման, տեղափոխման, անշարժ գույքի վարձակալության հետ կապված, ինչպես նաև գույքային այլ իրավահարաբերություններում օգտվում են ՀՀ քաղաքացիների համար նախատեսված նույն իրավունքներից: Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք անշարժ գույքի ձեռքբերման, տնօրինման, տիրապետման, օգտագործման, ինչպես նաև սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված իրավահարաբերություններում արժանանում են ոչ պակաս բարեհաճ վերաբերմունքի, քան այն, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է օտարերկրյա քաղաքացիների համար: Այս *անձինք չեն կարող ունենալ միայն հողի սեփականության իրավունք*, քանի որ ազգային օրենսդրությամբ հողի սեփականության իրավունք տրվում է ՀՀ քաղաքացիներին և ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ստացած օտարերկրացիներին:

Նշված սահմանափակումից բացառություն են կազմում տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման, հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար հողամասերը, որոնց նկատմամբ հիշյալ անձինք կարող են սեփականության իրավունք ձեռք բերել:

- **Մտավոր սեփականության իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձանց մտավոր՝ գյուտերի, արդյունաբերական դիզայնների, ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների, ինչպես նաև գրականության, արվեստի և գիտական ստեղծագործությունների սեփականության իրավունքների նկատմամբ տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ ՀՀ քաղաքացիներին:

- **Աշխատանքի իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք իրավունք ունեն ՀՀ տարածքում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Սույն իրավունքը, այունամենայնիվ, չի ենթադրում որ ԼՂ բռնի տեղահանված անձը կարող է հանրային ծառայության անցնել, օրինակ՝ ՀՀ ՆԳՆ, նախարարություններում կամ հանրային կառավարման այլ օղակներում: *Հանրային ծառայության անցնելու իրավունք ունեն միայն ՀՀ քաղաքացիները:*

- **Ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք՝ ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված կարգով: Այս իրավունքը ենթադրում է, որ սույն անձինք կարող են իբրև ԱԶ հաշվառվել կամ ստեղծել իրավաբանական անձ՝ ծավալելով տարաբնույթ ձեռնարկատիրական գործունեություն:

- **Սոցիալական ապահովության և բժշկական օգնության իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք իրավունք ունեն օգտվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություններ, ժամանակավոր անաշխատունակության, արտադրությունում աշխատանքային վնասվածքի, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի համար տրվող նպաստներ, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները: Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք ունեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունք, եթե բավարարում են այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները:
- **Կրթության իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար կրթության իրավունք, այդ թվում նաև՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

- **Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք:** Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները, իրենց բնակության վայրի ընտրության և պետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունքի առումով օգտվում են ՀՀ քաղաքացիների համար սահմանված նույն իրավունքներից:
- **ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունք:** Հաշվի առնելով, որ ազգությամբ հայերը ՀՀ-ում բնակություն հաստատելու պահից ունեն ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք, ԼՂՀ բռնի տեղահանված ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:

5.2. Փախստականի պարտականությունները

Փախստականի կարգավիճակ ունեցող ԼՂ բռնի տեղահանված անձինք, իրենց իրավունքներից օգտվելիս, պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները և ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը: Նրանք պարտավոր են վճարել հարկեր, տուրքեր և կատարել օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումներ:

ԼՂՀ բռնի տեղահանված անձինք օժտված են ՀՀ քաղաքացիների հետ համահավասար իրավունքներով, սակայն որոշ իրավունքների վերապահված են միայն ՀՀ քաղաքացիներին:

6. ՉՎԵՐԱԴԱՐԱՐՉՎԵԼԻ ՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔ



Չվերադարձելիության սկզբունքը փախստականին որևէ կերպ չվերադարձնելն է այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ

- ռասայական,
- կրոնական,
- ազգային,
- սոցիալական որոշակի խմբի պատկանելության,
- քաղաքական հայացքների կամ համատարած բռնության,
- արտաքին հարձակման,
- ներքին հակամարտությունների,
- մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով:

Սա նշանակում է, որ ԼՂՀ բռնի տեղահանված որևէ անձ, ով ՀՀ-ում ունի փախստականի կարգավիճակ, չի կարող հարկադրաբար վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ դաժան, անմարդկային, ստորացուցիչ վերաբերմունքի, խոշտանգումների կամ պատժի վտանգ կա:

Չվերադարձելիության սկզբունքը չի կիրառվում այն փախստականի նկատմամբ, որը

- հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում ՀՀ անվտանգության համար,
- կամ որը, օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության համար, վտանգ է ներկայացնում հասարակության համար:

Այս առնչությամբ կարևոր է շեշտել, որ չվերադարձվելիության սկզբունքը որևէ կերպ չի խոչընդոտում ԼՂ բռնի տեղահանված անձանց միջազգայնորեն երաշխավորված վերադարձի իրավունքի իրացմանը՝ միջազգային փաստաթղթերում առկա իրավական չափանիշների ու սոցիալ տնտեսական, քաղաքական (ինքնավարության), անվտանգության ապահովման միջազգային երաշխիքների առկայության և այլ պայմանների բավարարվածության դեպքում:

ԼՂ բռնի տեղահանված անձինք չեն կարող հարկադրաբար վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ դաժան, անմարդկային, ստորացուցիչ վերաբերմունքի, խոշտանգումների կամ պատժի վտանգ կա:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1864-Ն

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՈՆԻ ՏԵՂԱԶԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակման, ինչպես նաև 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը բռնի տեղահանվել է իր մշտական բնակության երկրից՝ հայտնվելով Հայաստանի Հանրապետության տարածքում,

Նկատի ունենալով 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումը և Լեռնային Ղարաբաղի բնակիչների ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակիչները շարունակաբար զրկված են իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու հնարավորությունից,

Հաշվի առնելով, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղում 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական ագրեսիայի արդյունքում թիրախավորվել են նաև Լեռնային Ղարաբաղի բնակավայրերը և այնտեղ բնակվող խաղաղ բնակչությունը,

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրավական ացվող «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:



Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության բացահայտ ագրեսիան և լայնածավալ ռազմական գործողությունները հանգեցրել են տասնյակ հազարավոր զոհերի և զգալի նյութական կորուստների,

Հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները բռնի տեղահանվել են իրենց մշտական բնակության երկրից համատարած բռնության և բռնության իրական սպառնալիքի, արտաքին հարձակման, միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների զանգվածային խախտումների, հասարակական կարգը խախտող իրադարձությունների, Ադրբեջանի Հանրապետության հայատյաց, Լեռնային Ղարաբաղի ժողովրդին էթնիկ գտման ենթարկելու քաղաքականության պատճառով, և Լեռնային Ղարաբաղի բնակիչները հնարավորություն չունեն ներկայումս վերադառնալու իրենց մշտական բնակության երկիր,

Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղում բնիկ հայ ժողովրդի անվտանգության ապահովման միջազգային երաշխիքների բացակայությունը,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջարկությունը,

Ելնելով բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնված Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից

և ղեկավարվելով «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայով և դրան կից 1967 թվականի Արձանագրությամբ, «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 61-րդ հոդվածով, 62-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Ժամանակավոր պաշտպանության տակ վերցնել՝

1) Լեոնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրի հաշվառումներով անցնող անձանց.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող այն անձանց, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է Լեոնային Ղարաբաղում.

3) այն անձանց, որոնք չեն ունեցել հաշվառում Լեոնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրում, սակայն բնակվել են Լեոնային Ղարաբաղում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեոնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից:

2. Սահմանել, որ սույն որոշումը չի տարածվում սույն որոշման 1-ին կետում նշված, բայց այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձինք «Փախստականի և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ճանաչվում են փախստական:

4. Սահմանել, որ ժամանակավոր պաշտպանությունը տրվում է մեկ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ: Ժամկետի հաշվարկն սկսվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

5. Հաստատել՝

1) ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթ տալու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված անձանց կողմից օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ դիմելու դեպքում անհապաղ տեղեկացնել ժամանակավոր պաշտպանության վերցվելու հնարավորության մասին և վերջիններիս գրավոր համաձայնությունն ուղարկել ծառայություն՝ հաշվառման նպատակով.

2) օտարերկրյա պետություններում գտնվող և ժամանակավոր պաշտպանության վերցված փախստականների փաստաթղթավորումն իրականացնել ծառայության միջոցով՝ սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի համաձայն:

7. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի համաձայն՝ ապահովել սույն որոշմամբ սահմանված անձանց հաշվառումը ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց շտեմարանում՝ բացելով ամբողջ խմբի համար մեկ միասնական գործ, որտեղ պետք է գրանցվեն նրանց անձնական տվյալները՝ ներառյալ ընտանիքի կազմը:

8. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի «Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նմուշը տալու կարգը և այդ փաստաթուղթը կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով փոխանակելու կարգը հաստատելու մասին» N 1367-Ն որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն.Փաշինյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2



**ՀՀ քաղաքացու
իրավական
կարգավիճակ**

**Փախստականի
իրավական
կարգավիճակ**

<p><i>Կայուն իրավական կապ ՀՀ հետ և ՀՀ պաշտպանություն արտերկրում</i></p>	<p><i>Ժամանակավոր պաշտպանություն ՀՀ-ում</i></p>
<p><i>Միայն ՀՀ քաղաքացուն վերաբերելի իրավունքների շրջանակ</i></p> <ul style="list-style-type: none"> ➤ կուսակցություն ստեղծելու և կուսակցության անդամագրվելու իրավունք ➤ ընտրական իրավունքը (Ազգային ժողովի մատով) ➤ հանրաքվեին մասնակցելու ➤ հանրային ծառայության իրավունքը ➤ ՀՀ անարգել մուտք գործելու իրավունք 	<p><i>Մահմանափակ իրավունքներ, որոնցից փախստականն օգտվում է <u>ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ</u> <u>ՀԱՄԱՀԱՎԱՍՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ</u></i></p> <ul style="list-style-type: none"> ➤ ՄԱԿ ՓԳՀ-ին դիմելու իրավունք ➤ անվճար իրավաբանական օգնության իրավունք ➤ սեփականության իրավունք ➤ մտավոր սեփականության իրավունքներ ➤ աշխատանքի իրավունք ➤ ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունք ➤ սոցիալական ապահովության և բժշկական օգնության իրավունք: ➤ կրթության իրավունք ➤ ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք ➤ ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունք
<p>ՀՀ պաշտպանությանը մասնակցելու պարտականություն</p>	<p>ՀՀ պաշտպանությանը մասնակցելու պարտականություն փախստականները չունեն</p>

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրավական ացվող «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում: